ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2012թ. թիվ 217-Ա

ԼԵՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 56[1] հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 41 հոդվածով, 42 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.15 կետի զ/ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեոդեզիայի և հողային պետական տեսչության» 28.08.2012թ. Հ.3 որոշումը և 21.06.2012թ. թիվ 24 ակտը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Պետական կամ համայնքային սեփականության հողամասերի օգտագործման տրամադրման կարգը խախտելու համար Լեջան համայնքի ղեկավար Սասուն Մարգարյանին նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Տուգանքը անձնական մրջոցներից 15-օրյա ժամկետում մուծել պետական բյուջեի 900005243119 հաշվի համարին:

3. Տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում այն կիրականացվի օրենքով սահմանված կարգով:

4. Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ս.Մակարյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի համաձայն սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել Լեջան համայնքի ղեկավար Սասուն Մարգարյանին պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 17
ք.Վանաձոր